Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին

Հաստատում եմ

Վարչության պետ՝ Մ. Ավագյան

“22” դեկտեմբերի 2020թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2020

1. Վարչության/բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

№	Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի նպատակները և խնդիրները համահունչ են և չեն հակասում Համալսարանի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրին. Բաժնի նպատակներն են.
1	Ներդնել և ծավալել նորարարական կրթական գործընթաց՝ ապահովելով բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի պատրաստում՝ առցանց, էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայնակի կիրառման հիման վրա, կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:
2	Մասնակցել համալսարանի կառավարման համակարգի բարելավմանը, նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը, ինչպես նաև ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքների ձևավորմանը:
3	Մասնակցել SS-ով հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ապահովմանը՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու և դյուրակառավարելի դարձնելու նպատակով:
4	Մասնակցել համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը կառավարման տեղեկատվական-վերլուծական միասնականացված համակարգի ստեղծման միջոցով:
5	Մասնակցել համալսարանի տեղեկատվական ներուժի համալրման գործընթացին, նպաստել դրանց մատչելիությանն ու արդյունավետ օգտագործմանը կրթական և հետազոտական կարիքների զարգացմանը համահունչ:
	Բաժնի խնդիրներն են.
1.	Համակարգել և բարելավել՝ 1.1. Ժամանակակից տեխնոլոգիաներով ապահովված կրթական գործունեություն. 1.2. Ներդրված առցանց ուսուցման բազմագործառույթ էլեկտրոնային համակարգ. 1.3. Էլեկտրոնային ուսուցման ժամանակակից պահանջներին համապատասխան ինտերակտիվ դասընթացներ. 1.4. Կրթական ծրագրերի՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովվածության աճ. 1.5. Առցանց ուսուցման տեխնոլոգիաները կիրառող դասախոսների թիվ. 1.6. Դասախոս - ուսանող գործունեության էլեկտրոնային ուսուցման լայն կիրառում:

2. Հաշվետու տարում բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները. բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակուներ, գործառույթների քարտեզագրում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն:

Աշխատանքի թվարկում
Բաժինը հաշվետու տարում. **պարբերաբար** ● ապահովել է ASPU Google for Education համակարգի անխափան տեխնիկական աշխատանքը ՀՊՄՀ շուրջ 10 000 ներքին և արտաքին շահառուների համար, ● համակարգել է կիսամյակում շուրջ 5000 էլ. դասընթացների իրագործումը ASPU Google Classroom համակարգում առկա և հեռակա ուսուցման ձևերի համար, ● համակարգել է ASPU Google Meet առցանց տեսահանդիպումների հավելվածի արդյունավետ կիրառումը դասախոսների և ուսանողների ՀՊՄՀ յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում, ինչպես նաև ամբիոնների և ֆակուլտետների նիստերի առցանց կազմակերպման համար, ● իրականացրել է առցանց խորհրդատվական հանդիպումներ ՀՊՄՀ ֆակուլտետների և ամբիոնների աշխատակիցների հետ՝ նոր պայմաններում առցանց ուսումնական համակարգի գործածման վերաբերյալ քայլ առ քայլ ուղղություն տալու համար, ● տրամադրել է առցանց տեխնիկական օժանդակություն ՀՊՄՀ ուսումնաօժանդակ կազմի համար՝ ASPU Google for Education համակարգի վերաբերյալ, ● կազմակերպել է առցանց ռեկտորատներ և վարչական ստորաբաժանումների այլ առցանց հանդիպումներ aspu դոմենի շրջանակներում, ● կազմակերպել է առցանց կապը ԲՈԿ-ի հետ՝ ապահովելով թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունները ՀՀ ԲՈԿ-ի 020 և 064 մասնագիտական խորհուրդների շրջանակներում ● համագործակցել է ՀՊՄՀ ստորաբաժանումների հետ, առավելապես՝ Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի և Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հետ; **հունվար** ● նախանշել է բաժնի տարեկան աշխատանքները՝ ՌԾ-ի կողմից Բաժնի առջև դրված նպատակներին, խնդիրներին և տարեկան գործողությունների պլանին համապատասխան; ● թարմացրել է ASPU Google Classroom համակարգի տեխնիկական բաղադրիչները՝ հաշվետու տարվա ուսումնական գործընթացի էլեկտրոնային տիրույթը ապահովելու նպատակով; ● համակարգել է հեռակա համակարգի բակալավրիատի և մագիստրատուրայի 1-2-3 կուրսերի էլ. դասընթացների ստեղծման գործընթացը; ● վերահսկել է ամբիոնների աշխատանքը՝ Class-երում ուսումնական էլ. նյութերի տեղադրման տեխնիկական գործառույթը; ● նախապատրաստել է ASPU Google Classroom համակարգը առկա ուսուցման ձևի էլ. դասընթացների ձևավորման համար; **փետրվար** ● համակարգել է առկա ուսուցման ձևի բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի էլ. դասընթացների ստեղծումը ASPU Google Classroom համակարգում՝ ըստ ԳԽ կողմից հաստատված կրթական ծրագրերի, ● համակարգել է համապատասխան ուսանողների և դասախոսների կցումը Class-երին և յուրաքանչյուր էլ. դասընթացում ուսումնական նյութերի տեղադրումը, **մարտ** ● արագ վերակառուցել է էլեկտրոնային ASPU Google for Education համակարգը ամբողջովին առցանց ուսումնական համակարգի՝ հաշվի առնելով երկրում տիրող համաճարակային իրավիճակը, ● ապահովել է ուսումնական գործընթացի շարունակականությունը՝ առցանց համակարգի գործածման միջոցով, կիրառման մեջ դնելով Google Meet հավելվածը, ● ստեղծել է ուղեցույցներ դասախոսների և ուսանողների համար առցանց համակարգի հնարավորություններից գրագետ և արդյունավետ օգտվելու համար, ● համակարգել է առկա բակալավրիատի և առկա մագիստրատուրայի առցանց միջանկյալների իրականացման անխափան գործընթացը համաճարակի պայմաններում,

- ներառել է առցանց ուսումնական գործընթացին ՀՊՄՀ վարժարանը՝ ապահովելով ASPU Google for Education համակարգի գործիքներով
- օժանդակել է ՀՊՄՀ ուսանողների մասնագիտական և ուսումնական պրակտիկայի առցանց իրականացմանը;

ապրիլ

- համակարգել է հեռակա բակալավրիատի և հեռակա մագիստրատուրայի առցանց միջանկյալների և կիսամյակային քննությունների իրականացման անխափան գործընթացը համաճարակի պայմաններում,
- նախապատրաստել է առկա համակարգի կիսամյակային քննությունների առցանց իրականացումը,
- ստեղծել է տեսական ուղեցույցներ և տեսաձայնագրություններ քննությունների անցկացման կարգի վերաբերյալ,
- ստեղծել է ապահով և միասնական առցանց համակարգ ՀՊՄՀ ուսումնական գործընթացի փաստաթղթաշրջանառության իրականացման համար,
- համակարգել է հեռակա ուսուցման ձևի բակալավրիատի 4-5 կուրսերի ուսումնական գործունեությունը առցանց ASPU Google for Education տիրույթում,
- նախաձեռնել է ֆակուլտետային և ամբիոնային քննարկումներ և հավաքագրել առաջարկներ ավարտական ատեստավորման աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը առցանց կազմակերպելու վերաբերյալ
- նախաձեռնել է ֆակուլտետային և ամբիոնային քննարկումներ և հավաքագրել առաջարկներ ամփոփիչ ստուգումները առցանց կազմակերպելու վերաբերյալ;

մայիս

- նախապատրաստել է կանոնակարգ "Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի առցանց պաշտպանությունների"-ի անցկացման համար,
- իրականացրել է վերապատրաստումներ ամբիոնների և դեկանատների աշխատակիցների հետ՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի առցանց անցկացման վերաբերյալ՝ ըստ ուղեցույցների,
- համակարգել է առցանց կիսամյակային քննությունների իրականացումը,
- օժանդակել է առցանց լուսանկարչական ցուցահանդեսի կազմակերպմանը և թանգարանների օրվան ընդառաջ առցանց ՀՊՄՀ թանգարանի առցանց ցուցադրությանը;

հունիս

- համակարգել է առկա և հեռակա ավարտական պետական քննությունների իրականացումը ՀՊՄՀ բոլոր մասնագիտությունների համար,

հուլիս

- համակարգել է ֆակուլտետների գործառույթը ուսանողների ավարտական դիպլոմի տվյալների առցանց հավաքագրման հարցում և ճշգրիտ որակավորումների լրացման գործում,
- օժանդակել է ընդունելության առցանց կազմակերպման գործընթացին,
- համագործակցել է ՀՊՄՀ Սոցիոլոգիայի ամբիոնի հետ և մասնագիտական պրակտիկայի շրջանակներում ուսանողների հետ իրականացրել է հարցում ՀՊՄՀ ներքին շահառուների տիրույթում՝ ուսումնական գործընթացում առցանց համակարգի կիրառման վերաբերյալ,

օգոստոս

- իրականացրել է վերապատրաստում Արցախի պետական համալսարանում առցանց ASU Google Education համակարգի ներդրման և կիրառման վերաբերյալ՝ ՀՊՄՀ-ի օրինակով,
- նախապատրաստել է առցանց ուսումնական համակարգը նոր ուսումնական տարվա և կիսամյակի համար՝ հաշվի առնելով համաճարակի շարունակական բնույթը,

սեպտեմբեր

- ԿԷԿ բաժինը համալրվեց մեկ մասնագետով;
- համակարգել է առաջին կուրսեցիների համար վերապատրաստումների իրականացման գործընթացը դեկանատներում
- համակարգել է դասախոսների և ուսանողների կցվածության ապահովումը էլ. դասընթացներին
- համակարգել է ամբիոնների գործառույթը ուսումնամեթոդական փաթեթների հաստատման և դրանց տեղադրման վերաբերյալ համապատասխան Class-երում,
- ստեղծվել է 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի էլ. դասացուցակի համակարգ ՀՊՄՀ բոլոր մասնագիտությունների և բոլոր կրթական ձևերի համար,

- համակարգել է էլ. դասացուցակի լրացումը և գրագետ վարումը դեկանատների մասնագետների կողմից՝ հավաքագրելով ուսումնական գործընթացին վերաբերով ամբողջ գործընթացի ժամանակացույցը և նշումները մեկ ֆայլում՝ հասանելի դարձնելով այն ուսանողների համար;

հոկտեմբեր

- կազմել է մեդիաջոկատ համալսարանի կամավոր-ուսանողների հետ և մասնակցել է տեղեկատվական պատերազմում,
- ապահովագրել է ASPU Google for Education համակարգը թշնամական հաքերների հարձակումներից և ստեղծել է ուղեցույցներ դրա վերաբերյալ՝ @aspu.am օգտատերերի համար,
- իրականացրել է առցանց ուսումնական գործընթացի մոնիթորինգ՝ կողմնակի դիտորդի դերում, հնարավորինս պահպանելու ուսումնական առցանց գործընթացի իրականացումը պատերազմական ծանր հոգեբանական իրավիճակի պայմաններում,
- իրականացրել է սեմինար ամբիոնների և դեկանատների մասնագետների հետ՝ ուսանողների ակադեմիական տարբերությունների առցանց հանձնման համար,
- ստեղծել է հնարավորություն Արցախի ուսանողների համար՝ մասնակցելու առցանց ուսումնական գործընթացին ՀՊՄՀ-ի կրթական ծրագրերի շրջանակներում;

նոյեմբեր

- համակարգել է հեռակա ուսուցման ձևի առցանց դասընթացների ստեղծման և մեկնարկման գործընթացը,
- համակարգել է դեկանատների մասնագետների աշխատանքը՝ հեռակա առաջին կուրսեցիների առցանց վերապատրաստումը կազմակերպելու նպատակով,

դեկտեմբեր

- համակարգել է առցանց միջանկյալների և կիսամյակային քննությունների իրականացումը ASPU Google for Education համակարգի շրջանակներում՝ ըստ ուղեցույցների,
- համակարգել է ՀՊՄՀ ստորաբաժանումների 2020թ. տարեկան հաշվետվության առցանց հավաքագրումը,
- իրականացրել է ուսումնական առցանց գործընթացի մոնիթորինգ,
- հարցման իրականացում ՀՊՄՀ ուսանողների շրջանակում Classroom առցանց ուսումնական հարթակի վերաբերյալ

Կատարման վերլուծություն

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն արդեն 5 տարի է (2015 թ.-ից մինչ օրս), ինչ ավանդական կրթությունը համատեղում է էլեկտրոնային կրթության հետ՝ Google For Education համակարգի միջոցով: Այն մեզ հնարավորություն է տվել ապահովելու ուսանող-դասախոս կապը դասընթացների շրջանակներում բացի առերես և լսարանային հանդիպումներից, նաև համագործակցել էլեկտրոնային տիրույթում՝ Classroom-ում, որտեղ ամեն դասընթացի համար հատկացված է իր էլեկտրոնային դասարանը, էլ. դասարաններին համապատասխանաբար կցված են ուսանողները, դասախոսները: Classroom հարթակում դասախոսները տեղադրում են դասախոսությունները, գործնական և լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև հավելյալ և լրացուցիչ այլ նյութեր: Հատկանշական է այն, որ յուրաքանչյուր դասընթացի էլեկտրոնային տիրույթում ի սկզբանե տեղադրվում են նաև առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, միջանկյալների և ամփոփիչ ստուգարքների հարցաշարերը, որոնք հնարավորություն կտան ուսանողներին տեղեկացված լինելուն և դասերին, գործնական աշխատանքներին, քննություններին ավելի վաղ պատրաստվելուն:

Պայմանավորված երկրի արտակարգ իրավիճակով՝ COVID-19 համավարակի տարածմամբ, հաշվետու տարում ԿԷԿ բաժնի աշխատանքները ընթացան ոչ նախատեսված պլանով, սակայն մեր համալսարանը խնդիրներ չունեցավ ավանդական, առերես դասերը էլեկտրոնային տարբերակով կազմակերպելու առիթով և շատ սահուն կերպով տեղափոխվեցինք էլ. տիրույթ, քանի որ արդեն ունեինք ստեղծված համակարգ, էլեկտրոնային ուսումնական հարթակ, որտեղ դասախոս-ուսանող կապն արդեն կար և մյուս գործողությունները կազմակերպել արդեն շատ պարզ էր: Մեզ հաջողվեց նաև հաղթահարել հոգեբանական պատնեշը ուսանողների և դասախոսների մոտ շատ կարճ ժամանակում, որն էլ հենց արդյունք էր նրա, որ նախօրոք արդեն ունեինք այդ հարթակը: Տեսահանդիպումներն իրականացրել ենք Google Meet հավելվածով, որը մեզ հնարավորություն տվեց արդյունավետորեն և առանց որևէ խնդիրների հաղթահարել և բարեհաջող իրականացնել մեր էլեկտրոնային դասերը Classroom հարթակում: Հավելվածն ունի շատ առավելություններ, որոնցից է

օրինակ էկրանը կիսելու հնարավորությունը, այս գործողության միջոցով դասախոսը կարող է իր էկրանը՝ տեսասահիկների, տեսանյութերի, դասախոսությունների կամ առաջադրանքների տեսքով, ցուցադրել ուսանողներին, ուսանողները նույնպես: Այստեղ հնարավորություն ունենք նաև դասը ձայնագրելու, ապա այն էլ. հարթակում տեղադրելու, հաղորդագրությունների տիրույթ, որտեղ ինչ-որ տեխնիկական խնդիրների դեպքում տեղյակ են պահում, ունենք էլ. գրատախտակ, մեր նկարի ետնկանկարը ընտրելու հնարավորություն և նմանատիպ այլ գործիքներ:

Classroom հարթակում էլ. դասերն անցկացնելուց զատ համապատասխան գործիքների միջոցով մեծ պատասխանատվությամբ և առանց խոչընդոտների իրականացրել ենք նաև միջանկյալ քննությունները, ամփոփիչ ստուգումները, պրակտիկաները, կուրսային աշխատանքների պաշտպանությունները, պետական որակավորման քննությունների նախապաշտպանությունները, պաշտպանությունները՝ նախօրոք դասախոսներին և ուսանողներին ուղեցույցներով վերապատրաստելուց հետո, որոնք իրենց դրական արձագանքն ստացան թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների կողմից, ինչպես նաև նրանց, ովքեր օգտվել և օգտվում են այդ հնարավորություններից:

Առանձնահատուկ կերպով անցկացվեց ուսումնական առցանց գործընթացը մշակույթի ոլորտի (ուղղվածության) առարկաների մասով: Պարի, ռեժիսուրայի, երաժշտական գործիքների, կերպարվեստի, կիրառական արվեստի ոլորտի առարկաների համար բավականին դժվար եղավ դասընթացներն անցկացնել առցանց տարբերակով, հատկապես՝ հանձնել պետական քննությունները: Այս առարկաների շուրջ մեր դասախոսները փորձեցին արդյունքի հասնել՝ փոխելով դասավանդման մեթոդները և ավելի շատ տեղ տալով տեսական և դիդակտիկ նյութերի տրամադրմամբ և բանավոր քննարկումներին և էկսպլիկացիային:

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)

ԿԷԿ բաժնի գործառույթների հիմնական մասը կազմում է ASPU Google Classroom էլ. ուսումնական հարթակի համակարգումը ՀՊՄՀ ուսումնական գործընթացի շրջանակներում, ուստի ներկայացնում ենք դրա կիրառման SWOT-վերլուծություն-ը.

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
ստեղծված աշխատող էլ. ուս. համակարգ	կախվածություն արտաքին սերվերներից
5-ամյա փորձ՝ ուսուցումը էլ. բաղադրիչներով իրականացնելու առումով	էլ. գրադարանի հայալեզու նյութերի բացակայություն
ճկուն էլ. հավելվածներ	
անընդհատ բարելավվող գործիքներ	
միասնական էլ. տվյալների համակարգման տիրույթ	
Հնարավորություններ	**Վտանգներ**
միասնական դաշտ և համագործակցություն այլ բուհերի Google for Education համակարգերի միջև	Google ընկերության գործունեության դադարեցում
հեռավար կրթական ծրագրերի իրականացման բազմաթիվ հնարավորություններ	հեղինակային ուսումնական էլեկտրոնային նյութերի արտահոսք: